բեց քրիստոնեայ եկեղեցեաց միութեան խնդիրը։ Դէօլլինգէրը բաժանուեցաւ քաթոլիկ եկեղեցուց ոչ թէ թեթեւամիտ և անձնական հաշիւների պատճառով (քաթոլիկ եկեղեցական իշխանութիւնը պատրաստ էր ամեն կերպով նրան շահելու)։ այլ զի չափազանց արդարասէր էր և յոյժ հմուտ աստուածաբան։ Նա չէր կարողանում հաշտուել պապի անսխալականութեան հետ։ որ սպանում է ամեն ազատութիւն քրիստոնէական եկեղեցու մէջ։ որ քրիստոնէական վարդապետութեան հիմունքներից մէկն է։ Դէօլլինգէր։ որ ինֆլուէնցա հիւանդութիւնից մեռաւ։ մինչև իւր կեանքի վերջը։ ընայելով 90 տարեկանից աւելի էր։ պահպանում էր մարմնոյ առուգութիւնն և մտաց թարմութիւնը։ միշտ աշխատանաց մէջ լինելով։ Նա առանց գաւազանի մեն էր գալիս։ առանց ակնոցի կարդում և խօսում սուր և պարզ ձայնով։ Նորա այս առողջ վիճակը հետևանք էր նորա պարզ։ գրեթէ ճգնաւորական կենցաղավարութեան։ Նա երբէք գինի կամ գարեջուր չէր խմում։

ՔԱՐՈԶԻՉ ԲԵՐՍԻԷ

Եւգենիոս Բերսիէ ֆրանսական բողոքական եկեղեցու նշանաւոր քահանաներից մէկը։ վախճանեցաւ յանկարծական մահուամբ 1889 թ. Նոյեմբերի 18ին։ 58 տարեկան հասակում։ Մաքուան նախընթաց օրն Օրնանս բուլվարի մշակների ժողովում իւր սովորական եռանդով և ճարտարութեամբ քարոզ խօսելից յետ գիշերուայ 11 ժամին վերադարձաւ տուն և երկու ժամին վախճանեցաւ։ Եւգենիոս Բերսիէն։ որ հաշուագիտ մտաւոր և բարոյական յատկութեանց տէր էր։ ծնաւ 1831 թուականին Վ. գաւառում։ շատ համեստ և աղքատ գերդաստանի մէջ։ Իւր սկզբնական ուսումն ստացաւ իւր դիւցազնական հաստատամտութեան շնորհիւ։ Բայց այս էլ մինչև վերջը չկարողացաւ հասցնել չքաւորութեան պատճառով։ ուստի և 18 ամեայ Բերսիէն նաւ նստեց գնաց Ամերիկա։ որ այնտեղ գործակատարի կամ ուսուցչի պաշտօն ստանձնելով ձեռք բերէ միջոց իւր աստուածաբանական ուսումն կատարելագործելու և իւր կոչման՝ քահանայութեան պաշտօնին ծառայելու համար։ Այս յաջողեցաւ էլ նրան։ 1851ին վերադառնալով Փարիզ։ նա սերտ բարեկամական և ընտանեկան կապերով կապուեցաւ իւր նախկին ընկեր Էդմոնդ Պրեսանսէնի հետ (այժմ անդամ ծերակոյտի)։ Այս ժամանակից նա էլ Փարիզից չէ հեռացել և կատարում էր քահանայի պաշտօն Փարիզի այլ և այլ բողոքական եկեղեցիներում։ Վերջին ժամանակ Էռուալ թաղում

կազմեց ընտիր և բարեկարգ ծուխ և երբէք չհամաձայնեցաւ կառավարութիւնից ռոճիկ ստանալ։

Միայն 1870 թ. Փարիզի պաշարման միջոցին առ ժամանակ իւր մասնագիտական պաշտօնի շրջանից դուրս եկաւ, նախ զինուորական հիւանդանոցները կազմակերպելու և ապա Սէն-Մարտէնի թատրոնում հոգևոր քարոզութեանց մասնակցելու համար, որոնք շատ նպաստեցին Փարիզի բնակչաց մէջ բարոյական եռանդն ու հաստատակամութիւն պահպանելուն։ Այս քարոզներն, ասում է Մ. Լեգուվէն, որ նոյնպէս մասնակցում էր, սովատանջ քաղաքում համազօր էին հաց բաժանելուն։ Ոչ մի առենաբանի այնպէս չէին լսում և ծափահարում ինչպէս Բերսիէին։ Հասարակական ծառայութեանց համար 1871 թ. նա ստացաւ Պատուաւոր Լեգէոնի շքանշանը։ Նա հրապարակախօսութեան ճարտարապետն էր և գեղեցիկ խօսել սովորեցաւ, նախ գրաւորապէս աշխատելով։ Նորա ոճը կանոնաւոր է, շատ պարզ և ոչ բարձրաթռիչ։ բայց երբ հանգամանքները պահանջում են նա ինքն ըստ ինքեան ճոխանում է և զօրանում և այն յուզմունքն ու ազդեցութիւնն է գործում, որ սովորաբար հետևանք է լինում մեծ ճարտարախօսութեան զօրութեան։

ԱԶԳԱՅԻՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԸ

Յայտնի է ամենքին որ Ս. Էջմիածնի ձեռագիրների ժողովածուն մեր ազգային ամենամեծ հարստութիւններից մէկն է, թերևս առաջինը, և թէ այս ձեռագիրների անաղարտ պահպանութեան գործը արժանի է ամենամեծ հոգածութեան։ Այս մասին խօսելն իսկ աւելորդ կլինէր մեր կողմից, եթէ որ, այս երկրորդ անգամ «Արևելք» լրագիրը չհրատարակէր անհիմն լուրեր՝ իբր թէ սոյն մատենադարանը անինամ դրութեան մէջ գտնուելիս լինի, ոնհոգութեան մատնուած, ևլն։ Առաջին նամակը, որ «Արևելք»-ը տպել էր այս մասին, առնելով «Մշակ»